Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Ч-99

891.99
Պ-99 սգ.
19 NOV 2011
34
36488

Գրոց կարգադրի սեր ամենեցուն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԷԱՍ ԱՒԱԳԵԱՆՑԻ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

28238
06 APR 2013

Дозв. цензурою 12 Декабря 1903 г. г. Тифлисъ.

Բ. ՅԻՇԱՏԱԿ
ԻՄԱՍԻՐ
ՊԵՏՐՈՍԻՆ - ԻՆՃԻԿԵՆԻ
23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1923 ԹՎԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1871 աւնան եղանակի մէջ, օր մը բարեյիշատակ Պետրոս Դուրեան, յիւսկիւտար, Գօրանեան եղբարց տունը եկաւ, ուր Գօրանեանց մայրն՝ որ կարեկցութիւն ունէր միշտ նորա վրայ, հարցուց նմա. Պետրոս, տղաս, ի՞նչ ունիս, ո՞ւր տեղդ կը ցաւի։

«Ա՜հ, հանի հանըմ, հիւանդ եմ, ըսաւ ձեռքն ի կուրծս դնելով, հո՛ս սրտիս մէջ կրակ կայ, որ երբէք չի մարեր»։

Ցայնժամ թէեւ 10—12 տարեկան պատանի մ'էի եւ բոլորովին անծանօթ Պետրոսի, սակայն նորա այս հառաչանքէն այնչափ զգածուեցայ որ, երբ զանի տեսնէի, սիրոյ եւ համակրանաց տպաւորութեան տակ կզգայի զիս։

Այսօր 23 տարի է որ այն սրտաբեկ խօսքն մոռցած չեմ երբէք, եւ այժմ, երբ Դուրեանի խօսքն լինի, կը յուզուի սիրտս։

Պետրոսի հայրն Աբրահամ երկաթագործ էր եւ հազիւ կրնար իւր ընտանեկան օրապահիկն ստանել։

Պետրոս կը տեսնէր իւր ծնողաց կարօտ վիճակն, եւ կը ջանար ձեռն կարկառել նոցա. ուստի սեղանաւորի մը քով ծառայութեան կը մտնէ.

բայց առ եւ տրոյ մէջ ալ չը դադրեր գրչի եւ թղթի հետ խաղալէ. որովհետեւ շուկան բանաստեղծութիւն չերթար, ուստի կը ձգէ գործն եւ կառանձնանայ իւր տունն, եւ առաջարկութեամբ Տիգրան էֆ. Գալեմեանի կսկսի թատերական այլ եւ այլ խաղեր գրել, եւ վանառել Օսմանեան թատերական խումբին, եւ նովիմբ ապրիլ։

Տարաբաղդ Պետրոս այս խաղերուն եւ այլ գրած ընտիր ընտիր նամակներուն եւ բանաստեղծութեանց մէջ կը պատկերէր գրեթէ իւր կենաց վաղահաս ժամն, եւ իւր պատանեկան այն վառվռուն հասակին մէջ ապրելու բնական հարկին հետ գրական տենչն բուռն էր իւր արտին մէջ, իւր միակ փափաքն էր իւր ձեռագրած տպեալն տեսնել, եւ այնու բարոյապէս վարձատրիլ, զոր բանիցս լսած եմ իւր բերնէն։

Դուրեան իւր յոյսերուն մէջ կապրի եւ կը մեռնի բան տարեկան ծաղիկ հասակին մէջ։

Իւսկիւտարի գրասէր եւ ընթերցասէր ժողովուրդն կանխաւ գիտնալով նորա՝ իւր գործոց հրատարակման փափաքը եւ գնահատելով նորա հեղինակութեանց բարձր արժանիքն, նախ կարգադիր անձանց միջոցաւ նուագարանների բաղման արժանաւոր հանդէս մը կատարեց՝ եւ զանի անյազ հոգի յանձնելէ զկնի, չուզելով իւր հոգակոյտն անհետ թողուլ, գեղեցիկ մահարձան մը կանգնեց, եւ այնու չբաւականալով խորհեցաւ

նաեւ նորա յիշատակն անմահացնել, որպէս ինքը կը փափաքէր հետեւեալ տողերուն մէջ.

Իսկ անհետ եթէ մնայ
Երկրի մէկ խորշ հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնիմ։

Ուստի իւր թատերական ու բանաստեղծական գրուածքներէն գրեթէ մեծ մասամբ ասկէ անկէ ժողովելով եւ անմիջապէս բաժանորդագրութիւն բանալով, քիչ միջոցի մէջ գեղեցիկ հատոր մը հրատարակեց, եւ այսպիսեաւ զԴուրեան ներկային ու ապագային ծանօթացոյց, եւ ըստ իւր փափաքաց անմահացոյց զինքը։

Ահա այսպէս Իւսկիւտարի ազնիւ ժողովուրդը ամեն ջանք ու զոհողութիւն չը խնայեց Դուրեանի արժանաւոր յիշատակին, որոյ աշխատաւորաց գլխաւորներէն զոմանս միայն կը յիշեմ, որք են. Ա. Գօրան, Ս. Ֆելէկեան, Մ. Մելիքեան եւ բարեյիշատակ Դ. Զօպանեան ու Յ. Պարոնեան։

Այս խիստ համառօտ կենսագրութիւնը կը վերջացնեմ՝ ընդարձակն թողլով Բարսեղ էֆ. Էֆսերեանի, զոր արդէն աւարտած է։

Պ. Պ.

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՄԱՑԱԾԸ
ՊԵՏԲՈՒՀԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՑԻՒ ԹԷ

Ո՛հ, ի՞նչ ես դու, սէրը, երկնի հո՞ւր կամ ժըպի՞տ ...
Զունի երկին աչացդ կայծերն ու կապոյտ,
Վարդը չունի քու լանջդ ամբիծ՝ լուսափթիթ...
Զունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ։

Գիշերն երկնի կայծից՝ լուսնոյն սիրադէմ,
Ցերեկն ալեաց՝ ծաղկանց ժպտիս...մէկո՞ւն դէթ...
Իսկ քեզ համար ես արցունքով կ՝աղօթեմ,
Դու չես շնորհեր նայուածք մ՝ինձ հուր աչերէդ

Արդեօք էսկ մ ես թէ երկնի զըւարթուն.
Կը նախանձին փայլիդ վերայ վարդ լուսնակ,
Զայնիկդ ապշած լսելով՝ քաղցր ու թրթռուն՝
Նոճերու մէջ սրդայ լըռիկ լուսինեակ։

Ծնէի ցցի՞ւ թ՝հեւացող հով մ՝անուշիկ,
Եւ գգուելով երաղք ճակտիդ այդ անուշ,

Տայլ շունչըս շուրթերուդ մէջ ես յուշիկ
Լոկ սրբելով, եթէ շողաց աչքդ արտասուք։

Պարտէզդ եղեւ թէ վերթէն վարդ լացող,
Եւ երբ գայլը այգուն շաղին ժպտով պերճ՝
Գոյնով ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող՝
Վերջին շնչիկս ի գիրկդ առնէր ելէջ։

Բըլեէն ես եցիւ թ՝ առու մը վըճիտ,
Եւ, երբ յուշիկ գայլը մօտ իմ եղերքին,
Ցոլանար իմ հայելւոյս մէջ քու ժըպիտ՝
Պղտորելով կապոյտ ալիքս՝ ցամքէին։

Ա՛հ, եցիւ թէ լինէի ես ճառագայթ,
Շողշողայլ դէմքդդ վրայ վայրկի մի,
Խաբէի քեզ թ՝ ես աւելի դերազարդ,
Ի՝ անուշաբոյր մազերուդ մէջ մարէի։

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթէ աբուիր մէկուն սէր,
Ցցիւ թ՝անոր դերեզմանին քարն լինիմ,
Եւ դու թօշնած գաս շնչել շուրջս...արտասուել...
Քեզ հրպելու համար հարկ լոկ գոլ շիրիմ...

1867 թ.

ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԽԱՉ

Ո՛վ խաչափայտ
Դու քառաթև,
Որոյ ճակատ՝
Սիրոյ արև՝
Գամված Յիսուս՝
Փրչեց խոնարհ
Հոգի և լոյս
Սէր ընդ աշխարհ,
Ընդունէ՛ իմ հոգիս հեղիկ, փառաճաճանչ
Թևերուդ տակ, և սրվեցուր ինծի հաւատ,
Սէր, յոյս, որով միշտ բաբախէ իմ փափուկ լանջ
Եւ փարատէ՛ լուսավոր խաւարն արտէս վրհատ։
Սրվիմ աղօթք
Դառնալ քեզի՝
Երբ խուրթից ոտք
Իմ հանդիպի
Սեւ սատանին՝
Որ ճգնի միշտ
Դիւթել զհոգին
Ի մութ, ի վիշտ։

1871 թ.

ՄԱՆԻՇԱԿ

Ո՛վ մանիշակ, մանիշակ,
Ինչո՞ւ այդպէս գլխիկոը
Նայիս հողին սրդաւոը,
Ո՛հ, ինչի՞ այդ նըշանակ։
Մթէ դու կոյս մը տեսաը,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզբեզ կը տար այնչափ մութ,
Որ կը սրդաս սեւահաը։
Եթէ դու ալ վարդին պէս
Ունենայիր դոյզն բոսոր,
Կը շիկնէիր, ինչպէս որ
Շիկնեցաւ այն վարդը վէս,
Երբ տեսաւ օր մը ներա
Վարդերն ամբիծ այտերուն։
Շուշանին պէս դալկութիւն
Եթէ ըլլար քու վրա՝
Դժգունէիր, որպէս նա,
Ինչպէս որ օր մը շուշան
Դըժգունեցաւ անսրշան՝
Տեսաւ ձեռներն երբ ներա։
Եւ դեռ ըսե՞մ... օր մ՚երկին
Ամպոտեցաւ... էր արդեօք...
Երբոր կ՚ընէր նէ աղօթք
Վերն յառած աչքն ու հոգին։

1871 թ.

ՍԻՐԵՑԻ ՓԵՁ

Ցաղլ, շողլ ժամք էին,
Վարդից հրդեհ կաբ յերկինն՝
Փոխան ամպոց հուր հիւսքի,
Տեղաը մարգրիտ և ոսկի։
Թաւուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նուազկոտ՝
Կը հևայիր դու դժգոյն,
Ամրան սիւգի մը հանգոյն։
Աչերդ սիրոյ ատրուշան...
Եւ մատներովդ ղերդ շուշան՝
Կը վիճէիր ծաղիկ մը,
Ցառած շողից աչքդ երկնի։
Հիանայի թէ ի՞նչպէս
Փետել թերթեր վարդին վէս՝
Եւ թափթփել ի քո գլուկ
Զօրէին մատունքըդ գլուդ։
Եւ նըւազկոտ այդ աչեր
Նըշուլէին նո՞ր եթեր,
Եթեր մ՚ատեղց, ուր փոխան
Հրաշէկ սրլաքք կը շողան։
Ըրկը աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ զիս դերին,
Շըղթայեցիր զի՛ս, անգութ,
Նշոյլներովն վեհ հոգւոյդ։

Թո՛ղ, սիրտս, ինձնէ դնա հեռի.
Զուզեմ հոգւոյս թագուհի
Քեզ՝ որոյ կուրծն վարդի թերթ,
Այլ կըրանիկ սիրան է դէթ։

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սրտերու վէրք փորել,
Եւ կը սիրես, երբ կտրի՛
Քեզ պաշտող սիրտն արիւնի։

Թաւուտքի մը շուք նստեմ
Երբ որ մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գտնես զիս
Տերևներէն կը խօսիս։

Երբ առուակին մէջ վազփուն
Կո՛ւզեմ մոռնալ դէմքդ, դուն
Դարձեալ հոն կը գտնես զիս
Ալիներէն կը ժպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Զախջախել սիրտս և քընար,
Հոլին մէջէն միշտ մընչես՝
Թէ բընաւ զիս սիրած չես...

Դրկեմ սրտովս այս ցուրտ հող,
Ի՞ալ չը դիպիմ քեզի թող,
Կոյս մ՚է նաև դերեզման....
Կա՞ խորունկ սիրտ մ՚անոր նման...

1869 թ.

ՍԻՐԵԼ

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փըթիթք՝ խորշեր թաւուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտուան շաղն՝ իրիկուան բալ՝
Ճակատագրիս սև գիծ կարդալ՝
Խոկալ՝ սուզիլ՝ ըզմայլիլ սուտ։

Ո՛հ, խուրձ մը վարս՝ եղեմ մը շունչ՝
Շըջազգեստ մը շըջեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու մենակ
Սըրտակցել ջինջ վըտակին հետ,
Ցիշատակի չունի նա հետ,
Սիրտ մ՚որոյ մինչ սուզիմ յատակ,
Գըտնեմ զիս հոն դժգոյն յատակ,
Գաղտնիք մ՚ունի—այն անթիւ վէտ։

Եթեր մը տրուի սրտի լսեցի,
Հծծեց.—«Կ՚ուզե՞ս, սիրտ, ե՛կ ինծի»։

Ես ուզեցի սիրել զեփիւռ,
Որ երկնքէն թըռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբէ՛ք,
Հոգի՛ մ՚որոյ գաղտնիքն է բոյր,
Գիտէ շոյել երաշներ ցիւր,
Երկնի բոյրն յուշ կ՚ածէ առ հէր։

Ո՞հ, փունջ մը բոց փերսփերսաց ինձ.
—«Կ՚ուզե՞ս պաշտել հոգի մ՚անբիծ»:

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս՝ հոս դալկահար,
Պաշտել՝ գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քրմաց լարել աղի
Եւ սրտակցել սիրողաբար:

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
—«Քնարդ է ցուրտ սիրտ, եւ սէրդ՝ ցաւ»:

Թօթուեց թեւերն հոգիս մոլար,
Ճանչեց ընկէ, դեղ ու կրակ՝
Սիրտն անապակ, ինչպէս վտակ՝
Անմե՛ղ՝ ինչպէս սիւդ դալկահար՝
Հաւատարիմ՝ ինչպէս քընար,
Հրաժեշտ տրուաւ կեանքի մենակ:

Թոյլ մը նայուածք՝ փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ:

1871 թ.

ԹԱՆԱՏՍ
ԱՌՈՒՄՆԱՅԻՆ ... 1929 թվին

Լ Ճ Ա Կ

Ինչո՞ւ ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Մինթէ հայլուոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

Եւ կամ մինթէ կ՚զմայլե՞ն
Ալեակքդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փերփերդ:

Մելամաղձոտ լըճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լսել ու խոկալ:

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փերփուր,
Սիրտս այնքան խոց ունի քիւր:

Այլ եթէ գոդդ ալ թափին
Թոյլքն աստեղաց երկընքին,
Նըմանիլ չե՛ս կըրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհո՛ւն:

Հոդ աստղերը չե՛ն մեռնիր,
Ծաղիկներն հոդ չե՛ն թառմիր,
Ամպերըն չե՛ն թըրջեր հոդ,
Երբ խաղաղ է քու և օդ:

Լըճակ, դու ես թագուհիս,
Չի թ՝հոլէ մ՝ալ խորշոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խըռով
Չիս կը պահես դողդղալով։

Ծատերը դիս մերժեցին,
«Քընաբ մ՝ունի սոսկ»—ըսին։
Մին՝ «Դողդոջ է, դոյն չունի»—
Միւսն ալ ըսաւ։—«Կը մեռնի՞»։

Ոչ ոք ըսաւ։—«Հէք տըղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մընայ,
Թերևս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ։—«Սա տըղին,
Պատռե՛նք սիրտը տըրտմադին,
Նայինք ինչե՞ր գրուած կան։։։»
—Հոն հրդեհ կայ, ոչ մատեան։

Հոն կայ մոխիր։։։ յիշատակ։։։
Ալեակիդ յուզի՞ն Թող, լըճակ,
Չի քու խորքիդ մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ։։։

1871 թ.

ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻ

Դիժդոյն դիշեր մ՝էր քաղցրաբոյր աշնային,
Երկինքն աստղեր զերթ «սիրոյ վէրք» ցոլային,
Դեղնած ու չոր թերթից՝ լուսինն իւր բեկբեկ
Շողքը ցօղէր ամրան վարսերն աղեբեկ։
Շամբերուն մէջ կը սողոսկէր ուղիս մ՝անհետ,
Կայծեր՝ աստղեր կը խաղային ալեաց հետ,
Սիւդը խաղար տերևներուն հետ թեթեւ,
Կը շոյէր գլուխս՝ այրած ճակատս վառէ թև,
Նա իւր շնչովն իս դոհ ընել կը կարծէր,
Բայց կ՝արծարծէր, ո՜հ, իմ սիրոյն բիւր կայծեր։։։
Ոգի մ՝անցաւ սրտէս, թողուց հոն ըսաւեր,
Պատեղց բոյլ մը։։։ միայն դիտեն զայս աստղեր։։
Համբոյրի մը յիշատակին էր սիւդին շունչ,
Դը դողդոջ ձայնն՝ տերևներուն սա շըշունչ,
Դունատ ճակտին տխրիկ պատկերն՝ այս լուսին։։։
Ո՜հ, կեանք պէտք է տալ՝ սիրտ տրուի թէ կուսին
Կը սիրէ նէ, նայուածքին մէջ կը թոռմի։
—Ո՜հ, ի՞նչ է նէ։—ձիւնով շաղուած մի անդրի,
Վսեմ ճակտին վրայ դոյգ մը աստղեր վառ՝
Եթէ սիրէ՝ հալի, թ՝ատե՝ կը տրի սառ։։։
Լոկ հուր աչեր՝ ժըպիտ՝ արցունք տեսի նախ։
Կուրծս ուռուցիկ լանջ մը ըզգաց սիրաբախ,
Սիրոյ մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խօսք,
Դողդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ՝ըզգաց ձեռքս սոսկ,
Թևերուս մէջ լոյս մը՝ հով մը մարեցաւ։
Էակ չէր նէ, այլ սէր՝ հուր՝ շունչ՝ ժըպիտ՝ ցաւ։

1008
35-488

Գոհար աչեր՝ վարդ այտ, այլ ինքն էր թախիծ.
Այն գիսաւոր աստղէն «քար մը» մընաց ինձ ...
Ցիշատակ մը՝ գերեզման մը ... սուրբ սափոր՝
Ուր հեկեկով սիրտս կ'ընէ միշտ թափոր ...
Երանի՜ թէ ըլլամ ես շեթ մ'արտասուք
Եւ անհեռամ դամբանիդ քով սիրասուդ,
Ցցիւ թէ խոտ մ'ըլլամ ու ես ցամքիմ հոս.
Ծաղիկ կ'ըլլամ՝ բայց առանց քեզ չունիմ հոտ.
Լոյս թէ մութ՝ քուն՝ շուքդ պիտի չանհետի,
Հառաչելով ուշ պիտ՝ ըլլամ ոսկր ու դի.
Շիրմիդ վարդը չը թառամած՝ քեզ դրկեմ ես ...
«Կեանք կու տաս, սիրտ թէ տաս» ըսին եաւէս:

1869 թ.

ԱՌ ՄԱՑԻՍ

Ծաղիկներու մայրի՛կ դու կոյս,
Ո՛վ իմ Մայի՛ս ծաղկահանդերձ,
Սա երփներանգ ծաղիկներդ հանդերձ
Ե՞ր չը բերիր Ծաղիկն հոգւոյս:

Ո՜հ, միթէ կա՞յ այլ զբաւթիւն
Մայիս հոգւոյ ծաղիկներու.
—Նա փոքրիկ վերև գըլխու—
Մի դալկահար Մայիս անհուն:

1871 թ.

Գ. ՅԻՇԱՏԱԿ ԹԻՄԱՐԻՐ

(Թրքուհի)

Երեկոյ է, բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դադարն պէս յամբընթաց,
Գեղուհի մը ընկղմանած տրտմէ հոն,
Վերջալուսն աղջիկ մ'է սա, ո՛վ Աստուած.

Եթէ նայի,
Կ'ըսես.—«Հիմա կը մարի»:

Մեղրամսոմէ անդրնանդն մ'է հանդոյն.
Ի՜նչ դալկահար ... կարծես հաջաղը վառէ.
Պատան մ'է նուրբ ներա վարդեցը դըժդոյն.
Աստուած ըզնէ դոյդ մ'աչերովն կը վանէ.

Եթէ ժըպտի,
Կ'ըսես.—«Ո՜հ, հիմա կ'անցնի»:

Նայել կ'ուզէ, բայց աւելի կը նուազի,
Սիրտը խունկի պէս կը մխայ սիրավառ,
Նէ շողերու՝ բոյսերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղիկ թառ.

Եթէ շաբժի,
Կ'ըսես.—«Հիմա կը թռչի»:

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նման.
Կ'ուզէ սիրել ... համբոյրի մ'հետ նըւաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.

Եթէ շիկնի,
Կ՚ըսես.—«Հիմա կը բռնկի»։

Սըրտի մեղմու, ինչպէս կոչեց Լամարթին,
Որուն ծրծած ծաղիկին՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կը կոչեմ ինչ կոյս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ, որ հոսիլոն չունի դեռ.
Եթէ խօսի,
Կ՚ըսես.—«Հիմա կը հատնի»։

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չը հատնիր
Տընանկ կընոջ՝ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողել,
Կրակ մ՚է փրթած կողէն սիրոյ բոցակէզ...
Իսկ թէ մեռնի,
Կ՚ըսես.—«Հիմա կը ծնի»։

1871 թ.

ՆԷ

Վարդը գարնանի
Թէ կուսին տիպար
Այտերուն չըլլար՝
Ո՞վ յարդէր զանի։
Թէ չը նըմանէր
Կապոյտն եթերաց
Կուսին աչերաց՝
Երկինք ո՞վ նայէր։

Թէ կոյսը չըլլար
Սիրուն ու ամբիծ,
Զանուտուածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար։

1871 թ.

ՍԻՐԵՑԷՔ ԶՄԻՄԵԱՆՆ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
Միշտ վալվըլող, սիրոյ անշէջ՝ ճառագայթ,
Դեռ կ՚ապասես թափել սըրտից քու սըլաք.
Զո՞վ կը հրսկես, վեհ և անդո՞ւնդ, թէ կըմախք,
Որ սև ժայռից մէջ մարեցաւ այն բեկբեկ
Բարբառն վրեմ թէ «ըզմիմեանս սիրեցէք»։
Տնանկին դամբանը կ՚անհետի ոտնակոխ,
Տընակին մէջ մարի առկայծ կանթեղն հոգ,
Այն մութին մէջ նոթի արդեկը կը հեծեն,
Դըղեակին խրախ մինչև լոյս ջահը կը հիւծեն,
Հարուստին կառք ժխորով կ՚անցնի սրարշաւ,
Հէքին դագաղն իր գերեզմանն լուռ ի՞ջաւ...
Գեթսեմանին ի՞ջնող հրեշտակն դալկահար՝
Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու վառը չը ճանչնար՝
Նորա ցուրտ դոգն աղքատը սոսկ կոփոփի,

Ճոխն ու տընանկ պատանքին մէջ կ՚ելլան մի.
Կայծակնաթև թէ մըռընչին մըրկինեը
Թէ «Սիրեցէք զիրար», հէքն հոս չէ՞ն սիրեր։

1869 թ.

—◇◇◇—

ՆԵՐԱ ՀԵՏ

Համբոյր մ՚առի ներանէ,
Համբոյր մ՚անհուն գորով,
Երբ կարմիր շողք մարէին
Հորիզոնին վերեւէ։

Ձեռքս տարաւ կուրծքին՝ հոն
Սիրոյ երկին մ՚որոտար,
Թոշնեցայ գիրկն ես երբեւ
Համբոյր մ՚անհուն դալկահար։

Նէ զիս իր քով նըստեցուց
Գորգի վրայ դալարեայ,
Հուսկ ճաճանչ մը պլպլար
Ներա գիմացը վրայ։

Թոթովեցի ... դողացի ...
Առի համբոյր անհամար,
«Խօսի՛նք». բաւ. ո՜հ, խօսի՛ր.
Հատնել է լոկ ինձ համար։

Աչերու ըսցն երբ մարի,
Դաղրի արուին երբ սրտին,

Լոկ այն ատեն հարկ է որ
Անդոր շուրթերը խօսին։

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր վերթեցան,
Համբոյր մ՚առի գարձեալ ես
Ցանուն աստեղց ցիր և ցան։

Նէ թողուց որ վարքն աղատ
Սիւգը դէպ յիս բերելով
Միշտ հովհարէ բըռընչած
Ճակատս զով բոյրերով։

Ո՜հ, այն ժամը սակեղծ
Անշուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերէն երկաթէ։

Մեր համբոյրներն պահեցին
Տերևներն խարշամամբ,
Եւ շողերու տըւին շուք
Աստղերն երկնից այն անամպ։

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումէն ահարկու։

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր որսկեց ի գորով,
Բնութիւնն եղաւ պըսակիչ,
Մեզ պըսակեց աստղերով ...

1871 թ.

Ա. Ռ. ԿՈՑՄՆ

Ո՞Հ, մինչ ցերը, ըսէ, ո՛ կոյս, հոգիս ըլլայ
գեղոյդ գերի,
Եւ մինչև ցերը թրթռան աղիք ցաւած սրտիս
և քնարի,
Լոկ համբուրիկ մ՚ուզեցի քաղել այտերդ մէկ
թարմ վարդ,
Ճառագայթ մը խնդրեցի աչերէդ երկնաղբիւրթ.
Զբլացար դու, ոնդո՛ւթ, վարդ մը գ՚ոյն ճակտիս,
Եւ ճառագայթ մ՚այն անդունդին խոր սրտիս.
Ո՛չ, ես չեմ կրնար ապրիլ զուրկ գրկէդ,
Ծիծառնիկն ապրի դուրս բոյնէն դէթ.
Տրտմալար քնարբս զարնեմ ջախջախ,
Գոցեմ սիրտս սիրաբախ . . . .
Մնայք բարով, կո՛յս և քնար.
Կուսին տեղ լաց, քա՛ր,
Ճակատս նրսեմ
Հանգչեցընեմ
Մաշող
Հող:

ԿՈՑՄՆ ԼՊԵԱԼ

Հալեց սառեր գարնան արև,
Ոսկի մատամբք ճաղիկ՝ տերև
Ցանեց, ցրուեց ամպ ու բալ վոյթ,
Պարզեց աստեղց կամարն կապոյտ:

Ո՞Հ, մինչու կուսին
Նայուածքն է մրթին:

Ոսկի սրիռեց լերանցն արփի,
Ծիծաղեցաւ լուսինն յալի,
Կա՛յծ ու ծիծաղ, ծաղիկն համբուն,
Թերթեր՝ ուրս էր կարդայ զուարթուն,
Ո՞Հ, մինչու գունատ
Է կուսին ճակատ:

Թուլբուլն թառեր թաւուտ թրփին՝
Գեղգեղէ գեղ աղեօք սրտին.
Թռչունք մրթին անտառաց խոր
Զայնակցին, հեչտ սիրոյ ժրմոր . . .
Ո՞Հ, մինչու լինի
Լուռ՝ կոյս լեզուանի:

Աչիք սիրոյ ցոյց տան ձայն՝ նետ,
Մրմունջ՝ նայուածք տանելով հետ,
Ջրել կ՚երթան ծաղկոտ մարմանդ,
Թոթվէ խոտէն հովն ադամանդ:
Ո՞Հ, մինչու արտասուք
Թափէ կոյսն և սուգ:

Ի դրանց ոսկի արևելքին՝
Թռչըտելով սիւդեր հեշտին՝
Ծաղկանց՝ ալեաց՝ թերթից համբոյր
Տալով սահին թողլով համ՝ բոյր.
Ո՞Հ, մինչու հառաչ
Հանէ կուսին լանջ:

Ո՞ կոյս, լինչու այսպէս տըրտում
Սամոյը հոպոպը արտասուաթուրմ,
Դէմքդ սիրուն ծածկէն, վերցուր
Ճակատդ, շընչէ սէր, լոյս ու բոյր։

Անկողնդ՝ ծաղկունք,
Աստղեր՝ քեզի շուք։

—Սիրէն ես աստղերն երկնի.
Ալեն գիս ցոյց տար գեղանի,
Փայլէր ծաղիկ ճակատս անուշ,
Զեփիւռն ունէր հեշտ վոսկրաւոր՝

Մասնելու գկուսիկ.
Հրապոյրդ խաբուսիկ։

1870 թ.

ՆԱՑՈՒԱԾՔ ՄԸ

Ամրան տապէն ես խոնջած՝
Թաւուտքի մը բիւր բիւր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Ո՞րչափ սիրեմ շունչն հովատաց՝

Մեղմիկ
Հոգմիկ

Արշալուսին կանուխիկ՝
Ո՞րչափ սիրեմ՝ ոսքս մերկ

Կոխելով մարգ ծաղիկներկ՝
Լըւացուելու գտնել մէկ

Ցըտակ
Գ.ըտակ։

Երբ մկայնակ ես գամ ման,
Ո՞ըչափ սիրեմ կըակներս մերկ՝
Ներշընչելու սէրս անձայն՝
Հոտոտելու կուսի նման

Բաղցրիկ
Ծաղիկ։

Երբ հովանի ասաղաղարդ
Ըլլայ երկնից գմբեթարդ՝
Ո՞ըչափ սիրեմ՝ ի սաղարթս,
Երբ կը հեւսէ երգ ի վարդ

Թրթռակ
Սոխակ։

Բայց զասոնք չեմ փոխեր ընաւ
Մէկ նայուածքին հետ անբաւ՝
Թէ յուղարկէ ինձ հեշտեաւ
Իր աչերէն վառ ու սեաւ

Լուսիկ
Կուսիկ։

1871 թ.

ԴՐԺԵԼ

Փուռնջ մը կնճիռ՝ բոյլ մը կայծակ՝
Դըժոխք մ՚անէծք խոցեց հոգեակս։

Ես ուզեցի պաշտել ըղնէ,
Սիրել ժըպտաքն՝ փըթթիթք անհուն,
Սիրել աստղերն ոև աչերուն,
Եւ այն խոկումն, որ մըթագնէ
Պայծառ ճակատն՝ այն ամպըն է,
Որ կը շպարէ դէմքը լուսնոյն։

Գիշեր մը սուգ՝ անդունդ մ՚հառաչ
Ցուղեց Ներա հոգին ու լանջ։

Ես ուզեցի մինչ քովն ըլլալ,
Մըտիկ ընել թրնդիւն սրտին,
Շնչել՝ խըմել Ներա հոգին,
Եւ շոշափել լոկ ձիւնափայլ
Ծոծորակին վրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակքն ծըփին։

Ովկէան մը տըրտունջ լսեցի.
«Չիս կը նեղմս» հըծծեց ինձի։

Ես ուզեցի քընաբ մ՚ըլլալ
Ներա ձեռքին տակ հեւացող,
Ներա հոգւոյն խորն հիացող
Թեթև պատկեր մ՚ըլլալ շարժեալ,
Մոռնալ զիս՝ լոկ ըզնէ խոկալ՝
Կ՚վառէ երազ մ՚որուն մէկ շող։

Ամպրոպ մը սաստ ցընցեց հոգիս,
Գոչեց.—«Սիրել չե՞ս կրնար զիս»։

Ի զո՛ւր սիրտըս մըխաց առջին՝
Խընկարկելու սիրտն անապատ,
Ցուցի լրեն ճակատս գունատ,
Կուրծքս գոգած՝ մառն իմ աչքին,
Ի զո՛ւր շուրթերս դողդոջացին,
Զինքը սիրելս հըծծեցին յայտ։

Նէ հեռացաւ ինձնէ, ըսաւ.
—«Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարե՛ւ»։

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըլլն հոգիս,
Մոխիր դարձան երազներս յիս,
Ճակատագիրս խնծդաց ի վեր.
Խորշ մը կար, որ զիս չէր ծաղրէր,—
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս...։

Փուռնջ մը կնճիռ՝ բոյլ մը կայծակ՝
Դըժոխք մ՚անէծք խոցեց հոգեակս։

1871 թ.

ԶՆԷ ՊԱՇՏԵՄ

Ճառագայթի ու վարդի
Փըթթումներով վեհապանծ
Ես չը սիրեմ սա դէմքը՝
Սիրոյ ժպտով մը օծած։

Ն. ՅԻՇԱՑԱԿ
ԻԻՂԱԲԵՐ
ԱՐՈՒԵԱՆ - ԻՆՁԱԿԱՆԷ

Ես չը սիրեմ՝ երբ կուսի
Մ՚աչերը գիս բուրվառեն՝
Զերթ հուր ամպոց զոյգ մը հիւս
Յոնքերը տակ մեղմորէն։

Դիսատաղի պէս հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վրճիտ
Կոյսն, որ դէմքէն կը փրթթին
Լուսնի գալուկն ու ժպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կուսի մը հեզանազ,
Որ եզեմ մը կը բուրէ,
Վառէ երկինք մը երազ։

Ես չը սիրեմ սա կապոյտ
Զոյգ մ՚երկիններն գինովցած՝
Ոյր մէկուն մէջ պաշտի նա
Եւ միւսին մէջ ալ Աստուած։

Ես չը սիրեմ սա օտար
Ծբպլտները յուսաշող՝
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրբոյ անդունդը ծածկող։

Ես կը պաշտեմ գիս Պ...
Ինձ կը բաւէ իր սրբոյն
Մէկ ճառագայթը միայն
Եւ մէկ վարդը իր ժպտին։

Թէև սև աչքն հեղեղեն
Անթիւ աստեղց մշտ բոյլեր՝

Իր սև յոնքից շուքին տակ՝
Զորս ութ օրն է նա գրծեր։

Լուսինը ոչ ներա վարոն՝
Եւ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա.
Ճառագայթում սիրոյն։

Ես դողդողամ իր վերայ,
Նէ իմ վերայ գորովի,
Իսկ թէ մոռնամ գիս օր մը...
Ա՛հ, այն օրը քա՛ր կըտրի...։

1871 թ.

ՍԵՐ ՍԵՐ

Երբեմն հոգիս ասաղի մը բոց
Եւ թիթեռնի մ՚ունէր թեւեր.
Վերջալուսի նման ամպոց
Երազներ, հո՛ւր ճակատս վառէր։

Արդ սառոյցներ դառն արտօրի
Կը քարանան կուրծիս ներքև,
Եւ բարդք ամպոց սևաթորմի
Կ՚ուզեն խեղդել սիրտս և արև։

Հազիւ քանի մ՚օրերն կեանքիս
Ոսկեզօծեց իմ բաղդը վառ՝

Որոնք եղան լոկ Ովասիս
Մեղմող՝ կեանքիս դառն անապատ։

Մենանոցն օրեր ցրվերջ,
Երբեմն՝ հովտի, ծաղկանց ՝ երկնի
Զիւնափրթիթ ամպերուն մէջ
Կեանքիս մրրուրն ես թափէի։

Ծրծէի սէր, ծրծէի կեանք՝
Մինչ վերջալոյսն կը հրահրէր՝
«Մնաս բարով» է սա կարմրորակ,
Տրխուր կրակ ՝ երկնի ջոցեր։

Ունէի ես երբեմն առատ
Վարդեր՝ առատ աստղեր նոյնպէս.
Ճակատագիրս սև՞ տեսաւ շատ,
Բրցուց, քաղեց զսոնոնք սրրտէս։

Ունէի ես իմ սիրուհին,
Որոյ թէպէտ աչքն էին սև,
Սակայն սրգալ չրգիտէին...
Հրեշտակ մ՝էր նէ, հրեշտակ անթև։

Սև երազ մը օր մը դողդոջ
Մրղեց զիս սև փոսի մ՝առջին,
Ուր քար կրտրած՝ սիրտ է թրնդոջ՝
Դագաղի մ՝աչքս յառած էին։

Աւա՜ղ, ներա վարդքն ու աստղերն
Լուռ՝ պիտի տար կուլ այն սև փոս.
Ցուրտ համբոյր մը առի ճակտէն.
Ներա վերջին ձօնն էր, ափսո՜ս։

Եւ լրսեցի յայնժամ ՝ թի թի,
Սև սև հողեր կոշդ թնդեցին,
Տրխուր քօղքին վերայ փայտի...
Դրժոխք մ՝անէծք այն սև օրին։

Այն ցուրտ հողերն յեմ դատարկ սիրտ
Լցուցին՝ փոսն դոցելնուն հետ,
Եւ այս աշխարհն ալ անժըպիտ
Գոցեցին իմ առջև յաւէտ...։

1871 թ.

ԿՈԿՈՆ-ԾԱՂԻԿԻ ԿՈՒՄԻՆ

Լուսափրթիթ ՝ւ անարև
Զոյգ մ՝աշխարհներ ես տեսի
Ճառագայթից ՝ բոյսերու
Եւ փափկութեան ու լոյսի։

Ո՜հ, չէ նոցա պէս ամբիծ
Իտալական վեհ երկին,
Եթէ չունին աստեղց բոյլ,
Ամպ ու կայծակ ալ չունին։

Ո՜հ, յաւիտեան միշտ կոկոն
Կարծես զոյգ մը ծաղիկ են,
Բայց նման կոյս սրրտերու՝
Կարկ քաղցրը կը բուրեն։

Ձեռք կարկառել աշխարհաց
Ակնախնդիր ու անտես՝
Յանդուգն ըլլալ է լոկ քան
Աշխարհակալն Ալեքսանդր։

Ի՞նչպէս արդեօք կերպեց նա
Լուսագունտներու այս դողդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ
Մտածեց ոգի տալն կընոջ։

Եր դողդողան իմ շուրթեր
Հրպել սիրոյ այդ խրոսով
Կոկոն-ծաղկանց՝ խամրելու,
Արատելու երկիւղով։

Այլ ո՛ր շուրթն յանդգնի
Հրպել հրաշեց այդ լուսէ,
Կ'երդնում յաշխարհն աստեղաց
Թէ նա դար մը կը ծրծէ։

1871 թ.

Ի ԳԵՐԵԶՄԱՆ

ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻՈՅ ՎԱՐԴԱՆ ԼՈՒԹՓԵԱՆԻ

Հեծեծմունք

Ո՛հ, երկընքի ժապաւէններ՝
Ճառագայթներ՝ միացուցած

Էին սրտերը մեր միմեանց՝
Մեր սրտերը սիրանուէր։

Դուքա միմեանցս համար քանի՞
Էին անհո՛ւն բաց մատեաններ,
Հո՛ն ամեն բառ խորք մը ունէր
Իր ներքևը սիրոյ, ցաւի։

Ո՞հ, կը յիշե՞ս, Զամլըճայի
Սարը նրստած լուռ մըխայլնք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վրշտահարի։

Ըսթամպոլի կապոյտ դօտւոյն՝
Վոսփորի ծուփը դիտէինք,
Ուսկից և մերթ դանամպ երկինք,
Ո՞ ախորժներ լուռ մեր հոգւոյն։

Այն հիւսկէններըն երկընքին՝
Այն ամպերը ձիւնաթոռմի՝
Մինչ երեկոյ, ո՞հ, մի առ մի
Մեր նայուածքը դրրաւէին։

Զէնք խօսեր, խօսքն մեր հոգւոց
Անհունութիւնը կը պրդծէր.
Մենք զերթ երկու դրժգոյն բոցեր
Իրարու մէջ կ'այրէինք սոսկ։

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,

Սև ծրծէլնը՝ սուրդ անհատնում,
Նայէլնը միշտ եկիկս հեռու։

Անյուսութիւն, դերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք։
Քեզ յաւիրեցոյց այդ ըմպելիք,
Եղար երկնից դըժգոյն որդի։

Քու դալուկըդ դիս ցաւցուց շատ,
Եւ նայուածքըդ վերջին նըւազ՝
Զոր ուղղեցիր ինծի, աւա՜ղ՝
Բևեռեցուց յիս յիշատակդ։

Երջանիկ ես հոգ թէ թշուառ,
Զուարթնոյ թևով լուր մ՚ինձ դրկէ։
Ա՜հ՝ այս աշխարհս միշտ տաղտուկ է...
Ցաւերու մեծ մայր մ՚է աշխարհ։

Ո՞հ՝ եթէ հոգ ծառի մը շուք
Կայ, և նորա քով մէկ վրտակ,
Եթէ կայ հոգ սէր անապակ,
Կայ աղատ օդ,

Ո՞հ, կը թօթվեմ ես այս աղտոտ
Զորձն հոգւոյս՝ կեանքս՝ մինչ իսկ այսօր՝
Հոգ կը հաղնիմ, հոգ սրդաւոր...
—Ա՜հ՝ ուղածներս, Վարդան, կ՚ո՞ն հոգ...

1871 թ.

ԹԱՐԳՄԱՆԱԿ
ԽԻՌԱՀԵՐ
23 ՄԱՅԻՍ 1929 ԹՎԱՆ

ՀԾԾԻՒՆՔ

Երբոր վարդի փունջք հայեցի
Ծլյան դրժգոյն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրէն ես սիրեցի։

Թերթեր յուզող սիւգի մը պէս
Թրուար որտիս ծալքերն թօթվել՝
Քընարի մը կրակէ թել՝
Քեզ ձրդեցիր դու աղիքիս։

Արդ կը փախչիս ինձմէ սիւգի
Պէս, շուքդդ տաս լոկ քընարիս,
Գիսատղի պէս հեռուն կ՚նայիս՝
Հովին տրուած մաղերդ ոսկի։

Երբ աստղալոյց գիշերը է գով,
Շրջագայիս Պաղլար-Պաշի,
Գիտես թէ սիրաս մրչափ մաշի՝
Շրջազգեստիդ լոկ շրշիւնով։

Գայ սիւգն աղատ քեզ այցելու,
Նային քեզի աստղերն աղատ,
Ըստուերին մէջ մինակ ու զատ,
Ես կը դողամ քեզ մօտենալու։

Ո՞հ, թո՛ղ երթայ սիւգն կը ծաղկոց,
Նային աստեղք թո՛ղ յՈվկիան,

Եւ թող մէկ մ՚ես ալ դալկանամ
Քու նայուածքիդ մէջ կրակուբոց։

Մահիկն երբոր շառագունած
Ինչպէ լեռնէն ի հորիզոն,
Ալ կ՚անհետիս, չե՛ս շրջիր հոն՝
Կաղին՝ հովին՝ աստղին դիմաց։

Դերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կը վրսվրսան մեռելոց հետ,
Շրջագդեստիդ շշշիւնին դէթ
Ինձ արձագանգ՝ մահահրաւէր։

Նրւաղած են լոյս ու ժրխոր,
Դագրած շշշիւնք կանանց անմռունչ
Արդ կը թաղուին համբոյր՝ մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր։

Շրջագդեստիդ խշշտուքն յար
Կը վրսվրսայ դեռ ականջիս,
Հեծկլտալով ինչպէ հոգիս
Արտասրալից անդունդ մ՚ի վար ...

1871 թ.

ՁՕՆԻԿԲ

Մինակ էր·
Վարդ մ՚ըզգօն
Մատուցի
Ներա ձօն։

Շինեցաւ
Նէ գըւարթ՝
Կ՚ընդունէր
Երբ իմ վարդ։

Ներա քով
Վարդն որչափ
Էր անշուք՝
Գունատ ափ,

Նոյնպէս ձօնս
Համբոյրին՝
Զոր տրուաւ,
Զէր ընաւ գին։

1871 թ.

ՆՈՒԷՐ ՑԻՇԱՏԱԿԻ

ԱՌ Պ. Յ. ՃԱՆՓԷՍՃԵԱՆ

Ցուցք

Սա կապոյտ մայր-ովկէանին,
Ուր փոզփոզեն աւազք ոսկի,
Մեր երազոց վառարանին
Եղրէն՝ վարդից մէջ ածիւնի՝
Երբ արևը շողշողէ,
Դու իմ սէրը միշտ յիշէ։

Թաւուտքէ մը կանաչ ու մորչ՝
Որոց շուքը սիրէինք միշտ,
Նստել՝ խօսել շրթամբք դողդոջ՝
Ծրծել անյագ իրարու սիրտ՝
Երբ տերև մը խարշուիէ,
Դու իմ մրմունջքը յիշէ։

Առաւօտներն գարնանային՝
Ո՞հ, հորիզոնն ալ վարդավառ՝
Ցայց ելնելուդ ծաղկած մարգին՝
Ուր կը գբանես մորչ, չոր մացառ՝
Երբ թռչնիկ մը ճռռուողէ,
Դու իմ լեզուները յիշէ։

Պաղլաբ-Պաշի եւած ատեն՝
Եւ կամ սարը Զամլըճային՝

Սիրուն վայրերը, ուր միշտ արդէն
Ճեմել հոգիք մեր սիրէին՝
Երբ որ գեղեցուռ մը փրչէ՝
Դու իմ հոգին միշտ յիշէ։

Եւ առաւեայ աշխատանքէ
Վատակաբեկ վերադարձիդ՝
Եւ կամ սիրոյ արշաւանքէ
Դարձած ատեն տրոփ ի սիրտ՝
Երբ հորիզոնն հրդեհէ,
Դու իմ կրակները յիշէ։

Ամրան գիշեր մը երբ դանես
Ամպերն առատ դլխուդ վրայ՝
Եւ լուսինը լապտեր ընես՝
Դողդոջ քայլից դէպ ի Մօտայ՝
Երբ շրջագիտոտ մը շրջէ,
Իմ մաշած սիրտը յիշէ։

Տրտում նստած դու պատուհան՝
Ցառած երկնից այն սեւերես՝
Սև մտածմանց լոկ վառարան՝
Տրժգոյն ճակատդ և աչերդ վէս՝
Տրխուր կոչնակ մ՝ երբ հնչէ,
Մըտերմիդ մահը յիշէ։

6 հոկտեմբեր 1871 թ.

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜, մընաք բարով, Աստուած և արև՝
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերև ...
Աստղ մ՚ալ ես կ՚երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ ամբիծ
Եւ թշուառ ոգւոց անէ՚ծք ողբագին,
Որք թշուռին այսել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերու արմատ՝
Յաւելուն զէնքերն ու զաղջերն հրատ ... :
Այլ, ո՜հ, ի՞նչ կրսեմ ... շանթահարէ՚ զիս,
Աստուած, խոկն հսկայ վիշրէ հիւլէիս՝
Որ ժպտելն ձգտել՝ սուզել խորն երկնի,
Եչնել աստղերու սանդուխքն անալի ...
Ողջոյն քեզ, Աստուած դողդոջ էակին,
Շողին, փրթիթին, ալւոյն ու վանկին,
Դու, որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խլեցիր՝ թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տըւիր աչացս, հեզ տըւիր սրբոյս,
Ըսիր մահուան դուռն ինձ պիտի ժըպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես եռքի,
Կեանք մ՚անհուն շողի՝ բոյրի՝ աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշըշունչ,
Այժմէն թող որ շանթ մ՚ըլլամ դալկահար,
Պըլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թող անէ՚ծք մ՚ըլլամ ու կողբդ խըրիմ,
Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»:

Ո՜հ, կը դողդոջիմ, դժգոյն եմ, դժգոյն,
Փըսիքրն ներսըս դըժոխքի մ՚հանգոյն ...
Հառաչ մ՚եմ հեծող նոճիներու մէջ սև,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերև ...
Ո՜հ, կայծ տըւէք ինձ, կայծ տըւէք, ապրիմ ...
Ի՞նչ, երազէ վերջ դըրկել ցուրտ շիրիմ ...
Այս ճակատագիր ի՞նչ սև է, Աստուած,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գըծուած ...
Ո՜հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ՚ուզեմ դեռ՝ ապրիլ ու ապրիլ ...
Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՚ք,
Կայծ տուէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք:
Գարունն ոչ մէկ վարդ ճակատս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ՚ինձ չ՚են տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յաւ կուլայ խուզարկէ վրհեր.
Կըլլան մարդիկ, որ լացող մը չունին,
Անոր համար նա դըրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան.
Նախ կեանքը, վերջը լացող մ՚իր վրան:
Ի զո՞ւր գըրեցին աստղերն ինձի «սէր»
Եւ ի զո՞ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՞ւր սիւգեր «սէր» ինձ ներշնչեցին,
Եւ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՞ւր թաւուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չաւին երբէք շունչ,
Որ չը խըռովեն ... երազքիս վրայեմ

Թոյլ տալէն, որ միշտ ըզնէ եւաղեմ,
Եւ ի զո՛ւր ծաղկունը, փըթթեթներ դարնան՝
Միշտ ինկարկեցին խոկմանցս խորան...
Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

1871 թ.

ԶՂՋՈՒՄ

(Օր մը վերջը)

Երէկ երբ պաղ քրտանց մէջ
Սև մըրաւի մը կաւնէի,
Եւ թոշնած զոյգ մը վարդեր
Այտերուս վրայ կայրէին,

Անշուշտ ճակտիս վրայ մահու
Դալկութիւն մը կը պըլպլար,
Եւ մահու թռիչ մ՚ունէի.
Լրսեցի մօրս հեծեծում...

Բացի աչերըս խոնջած,
Մօրըս արտասրըն տեսի...
Ո՛հ, ճշմարիտ դորովի
Մարգարիտներ լոյծ ու կեղծ...

Մայրըս անհուն ցաւ մ՚ունէր,
Այն սև ցաւը ես էի...
Ո՛հ, գլուխըս փոթորկեց,
Այն սև հեղեղն տըւի դուրս:
Ո՛հ, ներէ՛ ինձ, Աստուա՛ծ իմ,
Մօրըս արտասրը տեսի...:

1871 թ.

ԻՄՄԱՀԸ

Եթէ դժդոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ՚ինջնէ իմ դէմ,
Շոգիանան ցաւերս ու հոգիս,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ սրնարբս իմ տիպար
Մոմ մը վըտիտ ու մահադէմ,
Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտասրաղօծ
Զիս պատանի մէջ ցուրտ գերեզմ
Փոթթեն, դընեն սև դագաղը՝
Գիտցէ՛ք՝ որ դեռ կենդանի եմ:

Եթէ հընչէ տըխուր կոչնակ,
Թըթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր համբ քայլ,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկ այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դէմ՝
Համասըփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ:

Եթէ՝ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սըգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէք, որ մի՛շտ կենդանի եմ:

Իսկ անընշան եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնիմ:

1871 թ.

ԻՆՁ ԿԸՍԵՆ

Ինձի կըսեն.—«Ի՞նչու լուռ ես»:—
«Ո՛հ, մինթէ բաւ կամ խօսք ունի՞
Արշալոյսը, որ կը բռնկի.
Չի անհուն է այն ալ ինձ պէս»:

Ինձի կըսեն.—«Միշտ տըխուր ես»:—
Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
Թօթափեցան գլխուս աստղիկք...
«Արշալոյս մը չանցա՜ւ սըրտէս»:

Ինձի կըսեն.—«Կըրակոտ չես,
Լըճակի մը պէս ես մեռած,
Դալկահար՝ դէմքդ ու հայեցուած»:—
«Ո՜հ, յատակն են իմ վերվուրներ»:

Ես ինձ կըսեմ.—«Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մօրդ գընա գոգ,
Գերեզման, հոն գտնես դու գոգ,
Վարդեր՝ թըթռում՝ թռիչ ու աստղեր...»

1871 թ.

ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ

Եթէ մօտն հոգակոյտիս,
Թուխ մոխրագոյն ա՛աչեր ներա՝
Թէ ջուխտ մարգրիտ թափեն իմ վրայ,
Ը ցաւագնիր ոսկերոտիս:
Ա՛յս իմ հանգիստ՝
Իմ լուանիստ,
Ա՛յս օթեան
Խաղաղութեան:

1871 թ.

ԻՄ ՑԱՒԸ

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Ցամաք գըտնել աղբերքն յամայր,
Ցամքել ծաղիկ հատակի մէջ.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:
Ջերմ համբոյրով մը դեռ չայրած՝
Սա ցուրտ ճակատս, դալկահար՝
Հանգչեցունել հոգէ բարձին.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:
Դեռ չը գըրկած էակ փունջ մը
Ծպտէ, դեղէ, հուրէ շաղեալ՝
Գըրկել սա ցուրտ հոգակոյտը.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Գաղցը երազով մ՚յըղի մրափ
Զանգոցրած գլուխս մըրըկահար՝
Ննջել հոգէ վերմակի տակ.
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:
Հաղնել հիւղին մուր-անուշը՝
Ծըծե՛լ նորա մըրուր-օդն յոր,
Մինչ ցաւ՚ը միանգամայն,
Ո՜հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:
Հէր մարդ՚ութեան մէկ ոսոր գոս՝
Հայրենիք մը. ունիմ. թշվառս.
Զօգնած անոր՝ մեռնիլ անշան:
Ո՜հ, ա՛յս է ոսկ ցաւ ինձ համար:

1871 թ.

Աշնան դիգոյն գիշեր մըն էր ձմրահուպ՝
Կը ցոլային երկինքն աստղեր ցիւր՝ ասուպ,
Զոր թերթերուն խորերն լուսինն իր ցեկ ցեկ՝
Շաղն կը ցօղէր՝ ամրան վարսիցն աղէրեկ.
Շամբին մէջ թարմ կը թաւալէր վրտակը,
Փաղփուն աստղեր կը շողային յատակը,
Ի անոր ալեացն հեշտիկ մրմունջը միայն
Սիրոյ քնարին վերջին լարին էր ողբ՝ ձայն...
Սիւգը կ՚սուլէր տերևներուն մէջ թեթև,
Դէմքիս վրայ կը սահեցնէր շղարշէ թև,
Նա իր շնչովն զիս գոհ ընել կը կարծէր,
Բայց կարծարծէր սրտիս սիրոյն վառ կայծեր:
Ոգի մ՚անցաւ սրբատէս՝ չ՚թողուց հոն ըստուերն՝

Յիշատակ մը ... միայն դիտեն այս աստղերն ...
Համբուրելից ախուր յիշատակ մ'էր սիրդին շունչն.
Իր դողդոջ ձայն տերևներուն այս շշշունչն.
Անոյշ ժըպիտն ու վեհ նայուածքն այս ալին,
Մեռաքս վարսերն սև հոգին տակ կը հալին ...
Դըժգոյն ճակտին տըխուր պատկերն այս լուսին,
Ո՞հ, կեանք պէտք է տալ՝ սիրտ տրուի թէ կուսին...
Կը սիրէ նա նայուածքիդ մէջ կը թաշնի ..
Ոխի մէջ՝ քար, սիրոյ մէջ՝ վարդ՝ սիրտ մ'ունի...
Անոյշ աչեր՝ ժըպիտ՝ արցունք՝ տեսայ լոկ,
Կուրծքս փարսեր լանջ մը դդաց սիրատրոփ.
Սիրոյ մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խօսք,
Դողդոջ դիրգ պաղ ձեռք մ'ըդդաց ձեռքըս սոսկ,
Թևերուս մէջ լոյս մը՝ հով մը մարեցաւ...
Էակ չէր նա, այլ սէր՝ հուր՝ շունչ՝ ժըպիտ՝ ցաւ...
Ըստուեր մ'էր նա՝ որ սահեցաւ դերթ թախիծ,
Բայց կանգ առաւ՝ փոս մը՝ քար մը ցրցուց ինձ՝
Յիշատակ մը՝ դերեզման մը՝ սուրբ սափոր ...
Ուր կը յածի հեկեկով սիրտ ցողաթոր ...:
Երանի թէ ըլլամ ես շիթ մ'արտասուք՝
Եւ կամ թէ խոտ մ'ըլլամ ու հոն ես ցամքիմ...
Ո՞հ, կեանք պէտք է տալ՝ սիրտ տրուի թէ կուսին...
Դարեր անցնին, շուքդդ պիտի չը մեռնի,
Արցունքներով կեանքըս պիտի ուշ թոռմի,
Շիրմիդ վարդերն դեռ չը թաշնած դըրկեմ քեզ,
«Կեանք կուտաս, սիրտ թէ տաս» ըսին ետևէս ...

10 օգոստոս 1869 թ.

***

Ահա սրանայ օրն երջանիկ՝
Ի յիշատակ ոսկեղենիկ,
Ցորում լըցան հէք հոգւոյս եղձք,
Ետուն տեղի սրտէս թախիծք:

Թարմացան հոյլ վարդք ոսկեփունջ
Կենացս պատեաց ըուրում զիմ շուրջ,
Եւ կարէ ոչ սրտիկն իմ վառ՝
Գոլ գոհ, յագիլ լոկ ի կիթառ,

Զհոգիդ ըզ սիրտ և ըզ բարիս,
Դու որ յարատսը զհիքօք փարիս,
Փրկչին մերոյ արձան տիպար՝
Փոյթ թշուառաց ի մըխիթար,

Դու որ ոտիռես զդամբանօք վարդ,
Տաս ցոյց զերկին յանկարկ զըւարթ,
Երդես, սոխակ, ի գիշերի,
Ո՞հ, ի գեղգեղդ սոսկումըն ցրեմ

Գերեզմանաց խօլ արհաւիրք,
Պարզես զբարեաց զյաւէրժ երկինք:
Քա՛ւ, քա՛ւ շնչեմ ես յայս յաշխարհ,
Եւ քոյդ ի շունչ մըխիթարար

Սիրելեացս խոր փակեցան փոսք,
Ատեղք յերև դան լուսահոսք,
Ցորչափ են թիւ՝ կա՛ց առ յապա
Ատեղաց վառ՝ ցորչափ նոքա,

Եւ ի յալիսքդ ձիւնափառ
Ըսփոփես գիՀքս հոգեբարբառ,
Եւ ի գամբանս եկ առ ի դուռ՝
Ըզփրկութեան մնչել զաղօթ։

ՄՆԱՍ ԲԱՐԵԱԻ

Առտու մը դեռ մըթնշաղ՝
Կը ծաւալէր շող ու շաղ,
Ծաղկանց մէջ քեզ տեսայ ես,
Կը ժըպտէիր լուսնոյ պէս։

Աչերդ սիրոյ ատրուշան,
Մատներդ էին գիրգ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր,
Նայուածքդդ ծնէր նոր եթեր։

Սիրտս թրռամ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրոյ եղան ձիւն մաղեր,
Ըսին՝ կեանքը երազ էր։

Մինչդեռ դու չե՛ս սիրեր զիս,
Մ'իշխեր գոնէ տիար սրտիս.
Ուր որ երթամ, դէմքդ ինձ հետ՝
Նայուածք չէ՛ այդ... մահու նետ։

Երբ անտառին խորն նըստեմ
Կ'երթամ լալ՝ լուռ մենաՀեմ,
Դարձեալ հոն կը գտնես զիս,
Տերևներէն կը խօսիս։

Երբ առուակին եզերքը՝
Նըստիմ սփոփել իմ վէրքը՝
Դարձեալ դու կը գըտնես զիս,
Ալեաց մէջէն կը ժպտիս։

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չը տեսնեմ քեզ՝ հանգչիմ,
Հողմոյն մէջէն կը խօսիս,
Թէ՝ դու ընաւ չ'ես սիրեր զիս։

Լուսնի լուսով գիշերը
Երբ ցօղեն իմ աչերը,
Դարձեալ դու կը գտնես զիս,
Աստղերուն մէջ կը ժըպտիս։

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մընաս բարեաւ... հայուհիս,
Անգո՜ւթ, արցունք մ'ալ չ'ունիս։

Փոխանակ քաղցը օրօրներու...
Որոցնես քով մայրիկը գքեզ միշտ ողբաց.
Երբ համբուրեց զիս՝ իւր այտերն էին թաց,
Թշուառ մ'էի, աչերս արցունք նախ տեսան.
Սիրուն գրկիդ հեռու աչերս ես բացի,
Այլ բնաղդմամբ ես քեզ համար նախ լացի, եմ անուշ,
Նոճեաղարդ տխուր դամբան այդ անյուշ՝

28 Յունիս 1868 թ.

ԿԸ ՍԻՐԵՄ ԶՔԵԶ

Ո՜հ, ո՞վ ես դու, սէր, երկնային շունչ կամ հուր,
Քու սև անհուշ աչերդ չունի գիշերը,
Վարդը չունի քու լանջդ ամբիծ ճիւնաթոյր,
Լուսին չունի քու վարդագոյն այտերը:

Ցայգն՝ ասպղերուն փաղփուն՝ լուսնոյն սիրադէմ,
Ցերեկն ալեաց, ծաղկանց ժպտիս, մէկուն... դէթ,
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղօթեմ,
Դու չես շնորհեր նայուածք մ'ինձ սև աչերդդ:

Արդեօք էնկ մ'ես թէ երկնից զբաղթուն.
Կը նախանձին գեղոյդ վրայ վարդ, լուսնակ,
Զայնիկդ ապշած լսելով քաղցը ու թրթռուն՝
Նոճեաց խորերն կը սդայ լռին լուսինեակ:

Այլ ի՞նչ քաղցը է, եթէ ըլլամ ես զեփիւռ,
Եւ գբգուելով մազերդ խարտեաշ ու անոյշ,
Տամ շունչս յուշիկ այտերուդ վրայ վարդաստիւռ,
Սըրբեմ, եթէ կայ, աչքերուդ մէջ արտասուք:

Պարտէզիդ մէջ լցի՜ թէ վարդ մ'ըլլամ ես,
Եւ երբ գու գաս առաւօտուն ծբպտով պերճ,
Որ քու այտերդ կարմիր գունովքս ներկես,
Թռամիմ...փափկիկ ձեռքիդ մէջ տամ կեանքիս վերջ:

Երանի թէ վրտակ մ'ըլլամ ես վրճիտ,
Եւ երբ յուշիկ նըստած մօտ իմ եզերքին՝
Պատկերանայ հայելոյս մէջ քու ժբպիտ,
Պրպտորելով կապոյտ ալիքքս ցամքին:

Այլ ոչ՝ անգութ, եթէ ունիս սիրտս,
Ինչի՞ համար գերեզմանին վէմն ըլլամ
Եւ հոն թափած դառն արցունքներդ ծբծեմ յար,
Ողդամդէմքդ...այլ ոչ՝ թէպէտ վէմն, այլ կուլամ:

Ո՜հ, դու սիրէ՝ գբգուէ՝ ժպտէ, հայ աղջիկ,
Քեզի համար պիտի մեռնիմ թող պըլպլուն
Արցունք մ'հեղու դարդաղիս վրայ սև աչիկդ,
Տըխուր շիրմիս վերև երդէ թո՛ղ պլպուլն՝

ՀԱՅՈՒՀԻՆ

Աշնան մէջ էր, երեկոյ մը
Վերադարձիս յիւսկիւտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Ծովուն ջուրերն ալ հանդարտիկ։

Ճոգենաւին սարաւանդը
Նստած անկիւն մ՝առանձնակի՝
Ուշադրութեամբ ես նոյն օրուան
Լրագրները կարդայի։

Մէկ մ՝ալ յանկարծ սանդուխէն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Շրխոթեց զիս, և աչերս
Դարձուցի դէպ յայն կողմը։

Հայուհի մ՝էր վեր ելնողն,
Բարձրահասակ և գեղադէմ.
Անցաւ մօտէս նա սիգաճէմ,
Նստաւ անկիւն մ՝ինձ դէմ առ դէմ։

Ո՜հ, կարծես թէ նա երկնային
Զուարթուն մ՝էր վար իջած՝
Լոյս սփռելու, սէր բուրելու,
Խրոխտելու սրտերն այրած։

Այլ չըգիտեմ թէ ի՞նչու
Կրկին աչերը յառած,
Իմ թերթիկիս վրայ միշտ՝
Սիրտս էր ամբողջ խըռոված։

Մինչև մէկ մ՝ալ նաւաստին
Խռպոտ ձայնով մը գալով մօտ՝
Ըսաւ. «Հասանք յիւսկիւտար,
Ալ ի՞նչ նստեր ես դու հոգ»։

Վեր վերցուցի աչերը,
Ոչ ոք տեսի մէջ նաւին.
Մենակ էինք երկուքնիս,
Մէկ մ՝ես, մէկ մ՝ալ...նաւաստին։

Ա.

Երեկոյեան լալն կը սողար բարդիք խաւ,
Այն լուսազարդ անդունդն հիւսելու ուաւ,
Տըխուր ըստուեր՝ զոր կը ձրգէր իր եաև
Լուսափրթիթ օրն սիրայնոց կարճատև։
Կը նշմարուէր հազիւ երկնի կապուտակ
Գմբէթին խոր փալփլող՝ ու՝ալլոյն ջինջ յատակ
Անդրադարձող՝ գիշերուան լոյսն անդրանիկ,
Զոր գրկեցին՝ շուտ վոսիորեան խոնջ աչք։
Մար մտնող արփւոյն մարէր հուսկ շառայլ

Սառնանամուտ ըլլոց վրայ քայլ առ քայլ,
Ինչպէս հիւծեալ կոյսի մ՝ակնարկ առ դամբան՝
Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրոյ դառնութեան,
Ինչպէս և լմ դիւթեալ ակնարկս առ արօտ՝
Զոր մրթագնեց մառախուղ մի նախանձոտ,
Ի՝ ալ չկրցի ընդնշմարել էակն ան՝
Զոր գգուէին ճաճանչ՝ դեվիւռ երկիւան,
Հողմածածան եր շրջազգեստն ու հոպոպը,
Դեղձան վարսից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք.
Կարծես ծաղիկ մ՝էր երազի հիաքանչ,
Կը կոխկռտէր այն ծաղկալից մարգաց լանջ.
Թողէք կոխել, զի կը փթթիէ աւելի,
Երբ որ հովիկը այտէն գոյն գեղանի
Եւ եր ամբիծ լանջէն առած քիչ մը հոտ՝
Տանի ոսկէ անապատներն աւազոտ՝
Ի՝ ահա փթթեն ծաղիկներ բիւր առաւել.
Անոր համար ի՞նչ է ծաղիկը ծաղկել,
Մինչդեռ սիրոյ կէս դիակներ կը յառնեն՝
Երբ սև աչքէն սրտաք մ՝ուզդէ բոցեղէն:
Լուսինն արդէն կը քօղարկէր՝ պճնէր զինք
Նուրբ ամպկով՝ ուսկից ուսան ... ուհիք
Ծածկել իրենց դէմքն հաճագով նրբաթել,
Անոր նման գրիգոյն ըլլալ ու դիւթել:

Լուսին, գրտի՛ր լոյս ցողելու ցածուն հիւղ,
Ուր գէթ ցամքած է կանթեղին առկայծ կուղ.
Մի՛, մի սորվիր գաղջ արևէն ձրմեռուան՝
Մառնալ հիւղն՝ ուր ամայի է վառարանն,

Եւ լոկ որտերն հոն կը մրկան յուսահատ ...
Ծագէ՛ հիւղին այն՝ բանտատեղծն ուր աղքատ՝
Ինք լոյս՝ կրակ, ոչ մէկն ունի գրքելու.
Սարն իր ատաղց՝ թոզ՝ դղեակն ալ ջահերու,
Գընա՛ ցողել լոյս անակին այն ցածուկ՝
Ուր մայր մը գիրկն առած կայտառ մի մանուկ՝
Ցայց տալ կ՝ուզէ քեզ Աստուծոյ գերթ պատկեր,
Դու, որ միայն սիրահարաց ես լապտեր:

Ցերեկներուն մէջէն արծաթ լի լուսին
Կը դիտէի՝ ինչպէս որ դէմքն հարս կուսին՝
Երբ կը ծածկէ քօղքն հիմենեան ոսկեթել.
Բայց սա վարդի փոխան գիտէ լոյս փթթել:
Ալ լոյսն ազատ և կարծես թէ աւելի
Երկնքի լուրջ խորը սուզած կը վալիլի,
Եւ վերջալոյսն ալ կըմարի՝ որ դեռ հոն
Հրդեհի պէս բոցավառէր զհորիզոն:
Եւ դո՛ւք, կրքակիք սիրոյ, մարինք շուտ և դուք,
Տեսէք՝ ինչպէս վերջալոյսն այս բոցաշուք ...:
Արդեօք արևն այսօր ո՞ւրքան սիրաբոյր
Կուսից լոյս դէմքն այրեց՝ ուսկից մեղմ համբոյր
Քաղել դողաս՝ կը վախնաս թէ կը թօշնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի:
Թաւուտք այսօր շուքերուն մէջ առանձին՝
Խորհրդաւոր ի՞նչ վսվրսուք լսեցին,
Ի՞նչ խոստումներ, ի՞նչ մրմունջներ սրտամաշուք.
Իսկ դուք, մացառք հովանոցակք, ա՜հ, իսկ դուք ...
Ո՞վ հովանի՛ք, թաւո՛ւտք, խորշե՛ր անմարդի՞

Ուր դայլայլիկ թռչնոց՝ խոշիւն սաղարթի,
Եւ երբ լսուի շրջազգեստի մը շշիւն,
Զոր տերևոց վրայ ոտիռէ մերկ աշուն,
Երբ շուքին տակ կոյս մ՝առանձին ընէ ման,
Ես տերևոց եռև դողամ անոնց նման,
Որ չըլլայ թէ դիպիմ աչքին բոցեղէն,
(Պէտք է դողայ միթէ տերևն արևէն):
Երբ ծիծառնուկն ինձ հետ հեծէ աղեկիզ,
Ո՛ըչափ ատեմ քաղքին ժրխորն, սիրեմ Զեզ:

(Հիւանդութեանս պատճառով ընդհատուած):

ՀՀ Ազգային գրադարան
NL0337338

28238